

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/1

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <Երևանի գարեջուր> ՓԲԸ 28.11.2013 թ-ի թիվ 994/01 բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 18.11.2013 թ-ի թիվ 1108881 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2013 թ-ի թիվ 1108881 հանձնարարագրի <Երևանի գարեջուր> ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 10.08.2013 թ-ից մինչև 07.11.2013 թ.թ. ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 18.11.2013 թ-ի թիվ 1108881 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով արձանագրվել է ընկերության կողմից ՀՀ կառավարության 16.05.2013 թ-ի թիվ 562-Ն որոշմամբ սահմանված կանոնների 2-րդ կետի պահանջների խախտման փաստ:

<Երևանի գարեջուր> ՓԲԸ բողոքում բերված փաստարկները.

Գտնում ենք, որ ստուգման ակտը կազմվել է <<<-ում Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի պահանջների սխալ կիրառմամբ և չի բխում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2013 թ-ի թիվ 1108881 հանձնարարագրի բուն պահանջից, որի կապակցությամբ ներկայացվում է սույն բողոքը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2013 թ.-ի թիվ 1108881 հանձնարարագրի պահանջի <Երևանի գարեջուր> ՓԲԸ-ում ստուգումը պետք է իրականացվեր միայն մեկ հարցի շրջանակում, այն է՝ <<Երևանի գարեջուր> ՓԲԸ-ում իրականացնել հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում>>:

<Երևանի գարեջուր> ՓԲԸ-ում կատարված ստուգման արդյունքում հարկային տեսուչների կողմից որևէ խախտում չի բացահայտվել, խախտման նկարագրություն չի տրվել և չեն նշվել այն անճշտություններն ու խախտումները, որոնք կարող էին որևէ իրավական նորմի չկատարման հիմք հանդիսանալ (<<<-ում Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 2-րդ մաս, 9-րդ կետ):

Համաձայն <<<-ում Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի՝ ստուգումների ընթացքում խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմվում է համապատասխան տեղեկանք, ինչը ստուգող մարմնի կողմից չի կատարվել: Ավելին, տեղեկանք կազմելու փոխարեն Ընկերությանն է ներկայացվել 18.11.2013 թ. թիվ 1108881 ակտը, որի առաջին կետի երկրորդ մասում բերված են ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ-ի 2013 թ. հոկտեմբերի 10-ի թվով հինգ հանձնարարագրերով, տարբեր տնտեսվարող սուբյեկտների մոտ կատարված հսկիչ գնման ռաումնասիրությունների արդյունքները:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 01.11.2013 թ-ի թիվ 1108881 հանձնարարագրով ընկերությունում կատարված հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգման արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից արտադրվող բոլոր ապրանքատեսակները դրոշմավորվում են ՀՀ Կառավարության 16.05.2013 թ-ի թիվ 562-Ն որոշմամբ սահմանված կանոնների համաձայն և որևէ խախտում այդ մասով չի հայտնաբերվել:

Ելնելով վերոգրյալից, և ղեկավարվելով «ՀՀ-ում Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, 11-րդ հոդվածով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի առաջին մասով, 69-72-րդ հոդվածների պահանջներով, ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ-ի կողմից 18.11.2013 թ-ին կազմված թիվ 1108881 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի համոզմամբ Ընկերության բողոքում բերված այն պնդումները, որ «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ում կատարված ստուգման արդյունքում հարկային տեսուչների կողմից որևէ խախտում չի բացահայտվել, խախտման նկարագրություն չի տրվել և չեն նշվել այն անճշտություններն ու խախտումները, որոնք կարող էին որևէ իրավական նորմի չկատարման հիմք հանդիսանալ (խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 2-րդ մասի 9-րդ կետի պահանջները), հիմնավոր չեն հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 2-րդ մասի 9-րդ կետի, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է. «ՀՀ ԿԱ ՊԵԿ ԽՀՎ ՀՏ-ի 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ 2218399, 2218397, 2218400, 2218398 և 2218396 հանձնարարագրերով համապատասխանաբար «ՎԱՐԴԱՆ ԵՎ ՄՈՆԻԿԱ», «ՄՀԵՐՄԱՐ», «ՍԵՐՈՒՅՔ», «ՍՈՒՇ» ՍՊԸ-ներում և «ՀԱՅԿ ՄՏՐՏՁՅԱՆ» ԱԶ-ի մոտ կատարվել են հսկիչ գնման ուսումնասիրություններ, որոնց արդյունքում գնվել են համապատասխանաբար 17 (տասնյոթ) հատ (մեկ հատի արժեքը 580 դրամ, գումարով 9860 դրամ), 6 (վեց) հատ (մեկ հատի արժեքը 560 դրամ, գումարով 3360 դրամ), 36 (երեսունվեց) հատ (մեկ հատի արժեքը 620 դրամ, գումարով 22320 դրամ), 9 (ինը) հատ (մեկ հատի արժեքը 630 դրամ, գումարով 5670 դրամ), 60 (վաթսուն) հատ (մեկ հատի արժեքը 550 դրամ, գումարով 33000 դրամ) ընդամենը 128 հատ ընդհանուր գումարով 74210 դրամի «ԿԻԼԻԿԻԱ» տեսակի պլասմասե 1.0լ տարողության գարեջուր: Գնված գարեջրերի վրա դրոշմավորված դրոշմապիտակների ստուգումից պարզվեց, որ ընկերության կողմից արտադրված և իրացված թվով 128 հատ 1 լիտր տարողությամբ գարեջրերը դրոշմավորվել են ոչ թե 1 լիտր տարողության համար ստացված դրոշմապիտակներով, այլ 0.33 լիտր տարողության համար ստացված դրոշմապիտակներով:

Միաժամանակ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով հարկային մարմին արգելված չէ նույն օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ընթացքում օգտագործել ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից այլ տնտեսավարող սուբյեկտներին իրացված ապրանքի՝ վերջիններիս մոտ իրականացված հսկիչ գնումների արդյունքները:

Վերը շարադրվածից հետևում է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 16.05.2013 թ-ի թիվ 562-Ն որոշմամբ սահմանված կանոնների 2-րդ կետի պահանջները>:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմված է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդված 2-րդ մասի 9-րդ կետի պահանջներին համապատասխան: Մասնավորապես, ստուգման ակտում նշված են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը, ինչպես նաև այն իրավական նորմը, որի պահանջները խախտվել են:

Հանձնաժողովի 13.12.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ